ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«21» հոկտեմբերի 2014թ. N 87-Ա

ք. Արմավիր

ԴԱՎԻԹ ԴԱՎԹՅԱՆԻՆ ԵՐԵՎԱՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2006 թվականի հունիսի 26-ի N 546-Ն որոշմամբ սահմանված N 1 հավելվածի 8-րդ և 9-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետի քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագիրը՝

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետ Դավիթ Դավթյանին (ծածկագիր՝ 63-2.1-7) 2014 թվականի նոյեմբերի 3-ից նոյեմբերի 14-ը ներառյալ գործուղել քաղաք Երևան՝ մասնակցելու Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2006 թվականի N 829-Ա որոշմամբ հաստատված վերապատրաստման ծրագրով տնտեսագիտության և կառավարման ինստիտուտի կողմից անցկացվող դասընթացներին:
2. Դավիթ Դավթյանի բացակայության ընթացքում քարտուղարության պետի պարտականությունների կատարումը վերապահել Հայաստանի Հանրապետության քարտուղարության ընդհանուր բաժնի պետ Մարիամ Առուշանյանին:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը (պետ՝ Վ. Մկրտչյան) սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարում:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ